



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ, Ա. Խաչատրյան-1

05 հունիսի 2023

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՀՈՒԼԻՍԻ 5-Ի՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ բնակիչներ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ.

Շնորհավորում եմ բոլորիս ՀՀ Սահմանադրության, ինչպես նաև պետական խորհրդանիշների ստեղծման օրվա կապակցությամբ:

Սիրելի՛ բնակիչներ, յուրաքանչյուր պետության և ժողովրդի համար անգնահատելի է Սահմանադրության պատմական նշանակությունն ու կարևորությունը: Սահմանադրությունն ամրագրեց Հայաստանի Հանրապետության բնույթը՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության, հոչակեց մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, սահմանեց հանրապետության կառավարման ձևը՝ հիմնված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա:

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Անկեղծ ցանկությունս է, որ Սահմանադրության օրը դառնա ՀՀ քաղաքացիների բարձր գիտակցությամբ՝ սիրելի տոն, հարգանք օրենքի, քաղաքացիների իրավունքների և պետական խորհրդանիշների հանդեպ:

Շնորհավորում եմ բոլորիս՝ մաղթում խաղաղություն, լավատեսություն, հավատ մեր պետականության ապագայի նկատմամբ և բարեկեցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ